ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

6 հոկտեմբեր, 2023 թվականի № 62-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի № 57-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 5-ին ներկայացված թիվ N Հ.Մ./02-255/23 գրությունը և հաշվի առնելով տեսալսողական ծրագրերի հաղորդացանցերի պարբերական բարելավման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 30-ի № 57-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 30-ի № 57-Լ որոշման № 2 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Միջազգային ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի օգոստոսի 30-ի № 57-Լ որոշման № 3 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

6 հոկտեմբեր, 2023 թվականի